

DOI:

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ. գրականության
ավագ գիտաշխատող,
Բան. գիտ. թեկն., դոցենտ
Էլհասցե՝ nairahambardzumyan@yahoo.com

DOI:

ՍԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ 

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ. գրականության
կրտսեր գիտաշխատող,
Էլհասցե՝ siranush.parsadanyan.2014@mail.ru

**ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՄԱԲԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՌՈՍՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՑԻԱԼ-
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԵՎ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ
ԱԶՏԱՏԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐՈՒՄ¹**

Ամփոփում

Ուսումնասիրության մեջ քննվել են 19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում արևմտահայ գրող Սրբուհի Տյուսաբի գեղարվեստական և հրապարակախոսական գործունեությունը, հոդվածները, սոցիալ-հասարակական հայացքները: Տյուսաբի հրապարակախոսությունը քաղաքական, սոցիալ-հասարակական և գրական-մշակութային երկխոսությունների հեռարձակման նոր փորձ էր, որը առավելապես տարածված էր 19-րդ դարի երկրորդ կեսին:

Ուսումնասիրության *նպատակն* է՝ Սրբուհի Տյուսաբի հրապարակախոսական հոդվածները հետազոտելու միջոցով բացահայտել հեղինակի գրական-մշակութային և սոցիալ-հասարակական հայացքները, ինչպես նաև դրանց դերակատարությունը կանանց ազատագրության գործընթացներում: Ուսումնասիրության *խնդիրն* է՝ վերլուծել 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ կին հեղինակ Սրբուհի Տյուսաբի հրապարակախոսական ժառանգությունը, որը մինչ օրս համապատասխան

¹ Ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային «Կանանց հիմնախնդիրները 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության մեջ» թեմատիկ ծրագրի շրջանակներում: Ծածկագիր՝ 2IT-6B118:

քննության չի ենթարկվել: Ուսումնասիրության նորույթը կանանց ազատագրության և զարգացման ճանապարհները նորովի մեկնաբանելու փորձ է: Ուսումնասիրությունը միջգիտակարգային է: Այն վերլուծվել է գրականագիտության, պատմության, մարդաբանության և էթնոմշակութային փոխադարձ կապերի և առնչությունների համատեքստում: Կիրառվել են գրականագիտական, պատմական, մարդաբանական վերլուծության մեթոդները՝ ուսումնասիրվող նյութի շառավղում ընդգծելով և կենտրոնացնելով Սրբուհի Տյուսաբի հրապարակախոսական հոդվածներում գոյություն ունեցող տարաբնույթ դրսևորումները և շերտավորումները: Այսօրինակ ուսումնասիրություն կատարվում է առաջին անգամ: Այն կարևոր է և արդիական ոչ միայն միջգիտակարգայնության, այլև հայագիտության մեջ կանանց հիմնախնդիրների վերլուծության տեսանկյունից:

Բանալի բառեր և արտահայտություններ. Սրբուհի Տյուսաբ, հրապարակախոսություն, աշխարհաբառ հայ լեզու, օսմանյան բռնապետություն, Կ. Պոլիս, Զմյոռնիա:

Ներածություն

Սրբուհի Տյուսաբի գեղարվեստական և հրապարակախոսական գործունեությունը սկսվում է 1880-ական թվականների Կ. Պոլսի և Զմյոռնիայի մամուլում տպագրված հոդվածներից: Տյուսաբի սոցիալական, քաղաքական և հրապարակախոսական մտահոգությունների առանցքը, ընդհանրապես, 19-րդ դարի երկրորդ կեսին չափազանց արդիական և ժողովրդականություն վայելող կանանց ազատագրության (կրթություն, դաստիարակություն, բարեգործություն, իրավունքներ և ազատություններ, աշխատանք, ընտանիք) հիմնախնդիրներն էին: Հասարակության ամենաճնշված անդամը, ըստ Տյուսաբի, կինն էր, ով ժամանակակիցների բնութագրությամբ դարձել էր ծննդաբերության մեքենա մը՝² «Ծնիլ ու անիծվել... ծննդաբերության մեքենա մը դառնալ, մատնոցը ձեռքն չթողուլ,

² Այս հանգամանքը լավագույնս արտահայտված է Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզներ» (1935) վեպի «Մեր ընտանիքը» հատվածում, երբ Եսայանը բնութագրում է իր մեծ մորը՝ Լուսիկ տատիկին, ով 13 երեխա էր լույս աշխարհ բերել: Տե՛ս Զ.Եսայան, Միլիտարի պարտեզներ, Ե., 2018, «Անտարես», էջ 9:

տունին հավքտուքովն և ավելին կոթը բռնելով օրերը անցուցել խոհանոցին մեջ հոտիլ»³:

Տյուսաբը կանանց ազատագրության գաղափարին հանգել էր ոչ միանգամից: Նա գտնում էր, թե կանանց կրթությունը և դաստիարակությունը պետք է ազատ լինեն կրոնական ներազդեցություններից, որոնց հետևանքով կինը դառնում է մի էակ *առավել ի վնաս, քան թե հոգուս ընկերության*⁴: Տյուսաբը անդրադարձել է նաև կրոնի և, ընդհանրապես, մարդու և աշխարհի զարգացման և առաջընթացի անհամատեղելիության հիմնահարցերին և պայքարել է այդ վտանգի դեմ՝ «Յորչափ ազգության գաղափարը կրոնքի գաղափարեն չի զանազանվի, ցորչափ կրոնքը ազատ խղճի խնդիր մը չի համարվի ու ազգությունը իբրև ժողովրդյան էական կյանքը, ցորչափ կրոնքը և ազգությունը, այս երկու որոշ սկզբունքները, յուրյանց սեփականացյալ սահմանաց մեջ չամփոփվին, միության, ազգության ու հառաջադիմության բառերը սնտոյի հույսեր են»⁵:

Սրբուհի Տյուսաբի հրապարակախոսության առանցքում նաև հայոց լեզվի աշխարհաբարացման հիմնախնդիրներն էին: 1880 թվականին Տյուսաբը տպագրում է «Աշխարհաբառ հայ լեզուն» հրապարակախոսական հոդվածը, որը ուղղված էր նոր գրական լեզվի պաշտպանությանը: Ընդգծելով լեզվի պարզեցման դրույթները, նա գրում է՝ «նախ աշխարհաբառի ձևակերպությունը իբրև մեր գլխաւոր պէտքերէն մէկն համարելու է, քանի որ առանց կանոնադրութեան մը ողորկ և միակերպ ոճ մը չենք կրնար ունենալ և հետեւապէս վայելուչ մատենագրութիւն մը՝ այն կենսական հիւրը որով ժողովուրդ մը կը սնանի, կը զարգանայ, և մեծ կը հանդիսանայ»⁶: Տյուսաբը աշխարհաբար լեզվի տարածման կողմնակիցներից էր, քանի որ հավատում էր՝ առաջադիմության առաջին նախապայմանը ազգի համար հասկանալի լեզուն է՝ «Կը գտնուին այնպիսիներ որոնք լեզուն իբրև երկրորդական խնդիր կը նկատեն, առարկելով թէ լեզուն ձեւ մ' է միայն իմաստը բացատրելու. բայց նոյն իսկ յօգուտ իմաստին ձեւը ազնուացնելու է, որպէս զի անոր ամենայն կատարելութիւնները երեւան ելլան: Յետոյ կաճառի մը միջոցաւ լեզուին հիմունքը հաստատելու է, և ոչ թէ մասնաւոր անձանց կանոնադրութեամբը,

³ Գր. Զիլինկիրյան, Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս, «Արեւելեան մամուլ», Զմյուռնիա, 1883, էջ 114-115:

⁴ «Մասիս», Կ. Պոլիս, 1880, թիւ 2587, էջ 2:

⁵ «Մասիս», Կ. Պոլիս, 1880, թիւ 2528, էջ 2:

⁶ Ս. Տյուսաբ, Աշխարհաբառ հայ լեզուն, Կ. Պոլիս, 1880, տպ. Յովսէփայ Գալաֆեան, էջ 14:

որ ուրիշ նպատակի չի ծառայեր եթե ոչ շփոթությունը աւելցնելու: Վերջապէս որչափ այդ ձեռնարկությունը ետ մնայ ճաշակը կ'ապականի, լեզուին մէջ անիշխանությունը կը զօրանայ, և վնասակարը կ'արմատանայ»⁷: Այս առաջադրությամբ և նախապայմանով է Տյուսաբը գրել «Աշխարհաբառ հայ լեզուն»⁸ հոդվածը, որը տպագրել է առանձին գրքույկով և ողջ հասույթը նվիրել է «Դպրոցասիրաց Հայուհեաց Ընկերութեան»⁹:

Մեթոդաբանությունը

Գրականագիտական մեթոդի միջոցով քննվել է 19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում արևմտահայ գրող Սրբուհի Տյուսաբի գեղարվեստական և հրապարակախոսական գործունեությունը, հոդվածները, սոցիալ-հասարակական հայացքները: Տյուսաբի հրապարակախոսությունը պատմա-քաղաքական և սոցիալ-հասարակական երկխոսությունների հեռարձակման նոր փորձ էր, որը առավելապես տարածված էր 19-րդ դարի երկրորդ կեսին: Այս համատեքստում կիրառվել է պատմական մեթոդը, որի միջոցով փորձ է արվել առանձնացնել հեղինակի հոդվածներում առկա 19-րդ դարի երկրորդ կեսի պատմական և պատմաքաղաքական ենթատեքստերը: Հեղինակի գրական-մշակութային և սոցիալ-հասարակական հայացքները, ինչպես նաև դրանց դերակատարությունը կանանց ազատագրության գործընթացներում քննվել են մարդաբանության տեսանկյունից:

Հրապարակախոսությունը որպէս սոցիալական բողոքի միջոց

1880-1882 թվականներին Կ. Պոլսի և Զմյուռնիայի մամուլում Սրբուհի Տյուսաբը տպագրել է հրապարակախոսական հոդվածներ՝ «Կանանց դաստիարակությունը»¹⁰, «Քանի մը խոսք կանանց անգործության մասին»¹¹,

⁷ Նույն տեղում, էջ 14:

⁸ Ս. Տյուսաբ, Աշխարհաբառ հայ լեզուն, Կ. Պոլիս, տպ. Յովսէփայ Գավաֆեան, 1880, 15 էջ:

⁹ Տե՛ս Պողոսեան, Հ. Եփրեմ Վ., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Ա. Մխիթարեան տպարան, Վիեննա, 1957, 748 էջ:

¹⁰ «Մասիս», Կ. Պոլիս, 1880, դեկտեմբեր:

¹¹ Հոդվածը տպագրվել է «Թերճեմանը էֆքեար» հայատառ տաճկերեն թերթում (1881, թիւ 1212), ապա արտատպվել է Զմյուռնիայի «Արեւելեան մամուլ» հանդեսում (1881, սեպտեմբեր, էջ 345-350) և Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» լրագրում (1882, փետրվարի 29, էջ 16): Տե՛ս «Արեւելեան մամուլ», Իզմիր, 1881, սեպտեմբեր:

«Հայ ընկերությունը»¹², «Կանանց աշխատության սկզբունքը»¹³, որոնց միջոցով բարձրաձայնել է կանանց ազատագրությանը վերաբերվող սոցիալ-հասարակական, տնտեսական (աշխատանքի), կրթադաստիարակչական և գրական-մշակութային հիմնահարցեր՝ լավ պատկերացնելով, թե սուլթանական բռնապետության պայմաններում ազատախոհությունն ու կանանց ազատագրության հիմնախնդիրները սակավ իրագործելի են: Օսմանյան բռնապետության մեջ ազատախոհությունն ու ազատամտությունը, կանանց ազատագրման և իրավունքների հավասարության խնդիրները որևէ կերպ չէին կարող հիմնավորվել և արմատավորվել¹⁴: Կնոջ կողմից կանանց ազատության, կրթության և իրավունքի հարցեր բարձրացնելը մեծ համարձակություն էր պահանջում: Նա իր գիտելիքներն ու փորձը ներդնում էր երիտասարդ իգական սերնդի կրթության և դաստիարակության գործում:

«Քանի մը խոսք կանանց անգործության մասին» և «Կանանց աշխատության սկզբունքը» հոդվածներում Տյուսաբը իրացնում է կանանց աշխատանքի հարցը: Տյուսաբի պայքարը կին-տղամարդ իրավահավասարության առիթով, սկսվում է «Կանանց դաստիարակությունը» հոդվածից, որում հեղինակը առավել ընդհանրացնում է նշյալ հիմնախնդիրը՝ զուգահեռաբար բարձրացնելով նաև ազգի կրթության և լուսավորության հարցերը: Ըստ նրա՝ իսկական զարգացումը ստեղծվում է ուսման, բարոյական կրթության և արժեքների զուգակցումով: *Բարոյական մարդ դաստիարակելու* պատասխանատու Տյուսաբը դիտարկում է կնոջը և հորդորում, թե հարկավոր է ուղղորդել կանանց՝ զարգանալու: Նա գտնում էր, թե վարժարաններում պետք է կրթվեն և դաստիարակվեն ապագա ամուսինները և մայրերը: Ըստ հեղինակի՝ կինը դպրոցից պետք է սովորի *ընտանեկան կամ ընկերական շահը վերադասել անձնականին*, լինի հաստատական, առաքինի, ձեռք բերի *տնտեսական գիտություն*: Մայրը

¹² Ս. Տյուսաբ, «Կանանց դաստիարակությունը», «Մասիս», Կ. Պոլիս, 1880 (դեկտեմբեր), էջ 2-3:

¹³ «Արեւելեան մամուլ», Իզմիր, 1881, դեկտեմբեր:

¹⁴ 1876 թվականին Աբդուլ Համիդի՝ պետության զավթումից հետո օսմանյան կայսրության պատմության մեջ սկսվել էին սարսափներով լի ժամանակներ: Հայության վիճակը ծանր էր: Գավառներում մոլեգնում էր սովը, մարդիկ զաղթում էին: Համիդյան բռնապետությունը խեղդում էր ամեն տեսակ ազատ խոսք և զաղափար: Բրար հաջորդելով սկսեցին փակվել հայոց մշակութային կենտրոնները՝ թատրոնը, արգելվեցին հայոց թագավորների և գորավարների նկարների, ազգային երգարանների տպագրությունը, հայրենասիրական բանաստեղծությունների արտասանությունը: Ամեն ինչ ենթարկվում էր գրաքննության:

պարտավոր է իր զավակին դաստիարակել ոչ միայն որպես *բարեկիրթ ու մեծահոգի* մարդ, այլև՝ *«ազգասեր մը, որուն համար սուրբ են ազգին հառաչանք և արտասուք, սուրբ են նորա հրճվանք, սուրբ են նորա իրավունք...»*¹⁵:

Կանանց ազատականացման հարցում, իհարկե, մեծ էր պահպանողական հանրության դիմադրությունը, հետևաբար՝ կնոջ բերանով կանանց ազատագրության հարցեր բարձրացնելը մեծ համարձակություն էր պահանջում: Հողվածներում Տյուսաբը ներկայացրել է կանանց անազատ վիճակը, առաջադրել է երկու սեռերի սոցիալական և տնտեսական հավասարությունների, կրթության և աշխատանքի իրավունքների պահանջները՝ գործնականում արևմտահայ իրականության մեջ դառնալով կանանց ազատագրության գաղափարը պաշտպանող երկրորդ կինը՝ Էլպիս Կեսաբացյանից հետո: Ըստ Մատթեոս Մամուրյանի՝ հրապարակախոսական հոդվածներով Սրբուհի Տյուսաբը *դառը ճշմարտություն* ասելու բարոյական արիություն ունեցավ՝ *մատը դնելով ազգային ծանր վերքի վրա*:

Սրբուհի Տյուսաբի «Քանի մը խօսք՝ կանանց անգործութեան մասին» հոդվածը լույս է տեսել 1881 թվականին «Թերճեմանը էֆքեար»¹⁶-ում: Այն բարձրաձայնում է աշխատանքի փրկարար դերը և նշանակությունը կանանց կյանքում, բողոքում է նախապաշարումների դեմ, որոնք արգելք են կնոջ անկախությանը: Այս հոդվածը արժանացել է մամուլի ուշադրությանը և տարբեր հրապարակախոսների դրական և բացասական կարծիքներին:

«Հայերուն մտական հառաջդիմության վրա քանի մը խոսք» բանախոսությունը

Սրբուհի Տյուսաբի հրապարակախոսական ժառանգությունը ուսումնասիրելիս հանդիպում ենք նաև հայերի մտավոր ձեռքբերումների մասին ֆրանսերեն մի դասախոսության, որը հեղինակը կարդացել է Կոստանդնուպոլսի հունական բանախոսարանում՝ տվյալ հաստատության նախագահի հրավերով:

Ըստ Եղիա Տեմիրճիպաշյանի՝ այդ ընտրությունը պատահական չէր, քանի որ Տյուսաբը հայերեն հոդվածների հետ մեկտեղ, տպագրել էր նաև *ֆրանսերեն քանի մը լուրջ հոդվածներ*¹⁷, որոնք ծանոթ էին մայրաքաղաքի եվրոպամետ հասարակությանը: Տյուսաբի հեղինակությունը մեծ էր նաև

¹⁵ «Մասիս», Կ. Պոլիս, 1880, դեկտեմբեր:

¹⁶ Հայատառ թուրքերեն թերթ, որի խորագիրը թարգմանաբար նշանակում է՝ կարծիքների թարգմանիչ:

¹⁷ «Գրական և իմաստասիրական շարժում», Կ. Պոլիս, 1885, տետր յոթերորդ, էջ 121:

որպես արևմտահայ կանանց երկրորդ խոշոր կազմակերպության՝ «Դպրոցասեր տիկնանց ընկերության» ատենապետ¹⁸: Բացի այդ, նա հասարակական բարձր դիրք ուներ՝ ամիրայի թոռ էր, նշանավոր գերդաստանի դուստր և պալատական երաժշտախմբի ղեկավարի՝ Պոլ Տյուսաբի կինն էր: Չնայած վերոնշյալ հանգամանքներին՝ Տյուսաբը գրում է, թե բանախոսությունը **խիստ անկատար է և շատ պակասներ ունի**, և ինքը չի կարողացել արտացոլել իրերի իսկական վիճակը, քանի որ իր **բերանը փակել էր համիդյան բռնապետության սարսափը**: Նա ստիպված էր չմտաբերել Նալբանդյանին, Աբովյանին կամ Բաֆֆուն և չարտասանել *Հայաստան* բառը¹⁹: Այս հանգամանքները լավ էր պատկերացնում Հայկակը (Արփիարյան), ով իր անդրադարձում նշում էր Տյուսաբի զգուշավորության պատճառների մասին՝ «Քաղաքագիտությունը կը պահանջե այս եղանակով խոսիլ»²⁰: Բանախոսությունը, արևմտահայ գրական մշակույթը տարածելու, հույն և հայ մտավորականությունը մոտեցնելու կարևոր փորձ էր: Այս առիթով, ուշագրավ է նաև Գրիգոր Չիլինկիրյանի նախաբանը, որը հեղինակը 1882 թվականի մարտի 22-ին ուղղել է «Թերճեմանը էֆքեար»-ի խմբագրին²¹:

¹⁸ Տե՛ս Պողոսեան, Հ. Եփրեմ Վ., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Ա. Մխիթարեան տպարան, Վիեննա, 1957, 748 էջ:

¹⁹ Նշենք, որ Բ Դոան հրամանով 1880 թվականից քաղաքականապես արգելվել էր *Հայաստան* բառի գործածությունը:

²⁰ «Մշակ», 1882, թիւ 55:

²¹ «Խմբագիր «Թերճեմանը էֆքեար» պատմական լրագրո»,

Ազնիվ Տիկին Սրբուհի Տյուսաբ Հունաց Միլլողոսին մեջ ըրած ընտիր բանախոսութամբն ոչ միայն իր անուրանալի տաղանդին, այլ նաև Հայ անվան փայլ մ'նս տվավ: Իր համակիր ունկնդիրներեն մին ըլլալու բարեբախտությունը ունեցա, հպարտություն զգացի Հայագգի գտնվելովս, և բանախոսութենեն ետք անկեղծությամբ և հուզմամբ շնորհավորեցի ուշիմ և լեզվազետ Արմենուհին, որ հառաջդիմության ձեռնարկի մը մեջ հանդգնության զգացումն մը ներշնչվիլը և գործքը խոսքեն վեր դասելը սրբազան պարտ մը կը համարի իրեն: Նկուն ազգերու վերաշինության պայմաններուն մին է լուսավոր և զորավոր ազգերու համակրության արժանի ըլլալ: Կարելի չէ այս համակրությունը վայելել առանց հառաջադիմական գեղեցիկ հանգամանք ունենալու: Մետանի հաղթություն մ'ոչինչ է՝ համեմատվելով հառաջադիմական հաղթության մը հետ: Մին սահմանված է ռազմագիտական պատահարներու գումարին վրա բարդվելու և անցելույն մթության մեջ մնալու. մյուսը կանգունն է ժամանակին և պատմության շահասիրական շողորթությունը և հավիտենապես ակներև կը մնա մարդկային խղճին մեջ: Կան պարագաներ, ուր կը հավնիմ թե լուսավորության ոգին կրնա ավելի շուտ արշավել, երբ ոյժն իրավանց ծառայելու կը սահմանվի: Բայց կը հավտամ թե բանահյուսական

19-րդ դարի երկրորդ կեսի մամուլի հաղորդագրություններից և թղթակցություններից տեղեկանում ենք, որ դասախոսությունը ընթերցվել է 1882 թվականի մարտի 12-ին, մոտ հինգ հարյուր հազար հայ և հույն ունկնդիրների առաջ, ապա, հրապարակախոս և թարգմանիչ Գրիգոր Չիլինկիրյանի թարգմանությամբ և հակիրճ առաջաբանով, «Հայերուն մտական հառաջադիմության վրա քանի մը խոսք» խորագրով տպագրվել է «Թերճեմանը էֆքեար» հայտատառ տաճկերեն թերթում: Նշենք, որ Տյուսաբի «Հայերուն մտական հառաջադիմության վրա քանի մը խոսք» խորագրով դասախոսությունը մեծ աղմուկ էր ստեղծել, արևմտահայ և արևելահայ պարբերականների էջերում դարձել էր մտքերի աշխույժ փոխանակության և նույնիսկ վիճաբանության նյութ:

Հայ կնոջ՝ օտար բեմի վրա ելույթ ունենալը, Մատթեոս Մամուրյանը գնահատել է որպես պատվաբեր ու պատմական նշանակություն ունեցող երևույթ, որը «ցույց կ'տա կանանց հակումն ու մասնակցությունն ազգային, բարոյական և մտավոր զարգացման»²²: Ինչպես վկայում են Մամուրյանն²³ ու Հրանտ Ասատուրը²⁴, Տյուսաբի հրապարակային ելույթի մասին դրվատանքով է արտահայտվել նաև Կ. Պոլսի եվրոպական մամուլը՝ դրա մեջ տեսնելով հայրենասիրական շարժառիթներ: Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» լրագրի Կ. Պոլսի թղթակից Սոսյունը²⁵ նույնպես գովասանքի

հրաշակերտ մը, հնարագիտական գյուտ մը, ճարտարագիտական գործ մը, ստուգապես հառաջդիմական ձեռնարկ մ' երբեմն աննսեհ ժողովրդյան մը ճակատագրին բարկությունը ավելի ապահովապես կը հանդարտեն, ճշմարիտը, գեղեցիկը, օգտակարը սիրող ազգերու ուշադրությունն ալ ավելի հաստատ կերպով կը հրավիրեն անոր վրա, քան թե նյութական ույժի տմարդությունները: Արդ, կը կարծեն թե Տիլին Սրբուհի Տյուսաբ Հայոց փանաքի այլ իրական հառաջդիմության վրա Սիլլոդոսի մեջ խուռն բազմության մ' առջև խոսելով և օտարներուն համակրությունը գրգռելովը նոր և փրկավետ ծառայություն մ' ըրավ մեր ազգին: Ֆրանսերեն լեզվով արտաբերված իր գեղեցիկ բանախոսության մի քանի հատվածներն օտար թերթերու մեջ արդեն հրատարակվեցան, բայց Հայ լրագիրներուն և ոչ մին տակավին հրատարակեց ամբողջ բանախոսության թարգմանությունը: Բարեբախտություն ունեցա ստանալու անոր բնագիրը, և անվանի գրագիտուհիին արտոնությամբը թարգմանելով, ահա Ձեզ կը դրկեմ, որ հաճիք ամբողջապես հրատարակել Ձեր ընտիր թերթին մեջ: Գր. Չիլինկիրյան, Բերա, 22 մարտ, 1882»: Տե՛ս «Թերճեմանը էֆքեար», 1882, 24 մարտի, 1383, էջ 2:

²² «Արևելեան մամուլ», 1882, ապրիլ, էջ 173: Այս տեղեկությո՞ւր արտատպվել է նաև «Լույս» լրագրում, 1882, մայիսի 22, թիւ 247:

²³ Նույն տեղում:

²⁴ Հ. Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 158:

²⁵ *Սոսյունը* գրական կեղծանուն է:

խոսքեր է գրել դասախոսության առիթով²⁶: Սակայն ընդհանուր այս պատկերի լիարժեքությունը խախտել է «Մշակի» պահպանողական մի թղթակից (Մ. Վ.), ով բանախոսությունը որակել էր *ոգու ստորության ապացույց մի*, քանի որ Տյուսաբը խոսել էր հույների առաջ, որոնց *«ոչ բարեկամությունը մեզ հարկավոր է և ոչ ալ թշնամությունն աղետալի»*²⁷: Այս առիթով, բավական մեծ և ծավալուն բանավեճ կա ծավալված Թիֆլիսի «Մեղու Հայաստանի»²⁸ և «Մշակ»²⁹ պարբերականների էջերում, ինչը հաստատում է, որ բանախոսությունը ներկայացրել է հասարակական հետաքրքրություն և հուզել է մտավորականությանը: Նշենք, որ Սրբուհի Տյուսաբի հրապարակախոսական ժառանգության այս կարևոր փաստը դուրս է մնացել գրականագետների ուշադրությունից³⁰:

Այս բանախոսությամբ Սրբուհի Տյուսաբը նպատակ է ունեցել Կ. Պոլսում ապրող հույն ազգաբնակչությանը ծանոթացնելու հայերի՝ վերջին հիստուն տարիների մտավոր զարգացումներին, առաջադիմությանը և ձեռքբերումներին: Այսօրինակ նպատակներ իրագործելը նշյալ ժամանակաշրջանում չափազանց դիսկալին էր, սակայն կարևոր, քանի որ 19-րդ դարի 80-ական թվականներին օսմանյան բռնապետությունում գրաքննության զոհ էին դառնում ոչ միայն հայկական, այլև հունական թերթերը, արգելվում էին ազգային թատրոնները, ամենուր տիրում էին քաղաքական, տնտեսական և սոցիալական հալածանքները ազգային փոքրամասնությունների նկատմամբ, հատկապես՝ հայերի և հույների, որոնք կազմում էին երկրի քրիստոնյա բնակչության մեծամասնությունը³¹:

²⁶ «Մեղու Հայաստանի», 1882, թիվ 29:

²⁷ «Մշակ», 1882, թիվ 54:

²⁸ Դասախոսությանը մի առանձին թղթակցություն է նվիրել Հայկակը (Արփիար Արփիարյան), ով դրական գնահատելով, կատարել է նաև քննադատական դիտողություններ: «Մշակ», 1882, ապրիլի 3, թիվ 55:

²⁹ «Մշակի» էջերում տեղ գտած քննադատությունը զայրացրել է «Մեղու Հայաստանի» թղթակից Սոսյունին, և նա իր մի հոդվածում անդրադարձել է այդ հարցին: «Մեղու Հայաստանի», 1882, մայիսի 5, թիվ 45:

³⁰ «Թերճէմանը Էֆքեար» լրագրի 1882 թվականի դեկտեմբերյան անհրաժեշտ համարը (ընդհանրապես, բոլոր համարները), որոնցում լույս է տեսել դասախոսությունը, Ե.ի Ազգային գրադարանում, ԳԱԹ-ում, Պատմության արխիվում և Մատենադարանում չեն պահպանվել:

³¹ Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), ՀԽՍՀ ԳԱ Պատմ. ինստ, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989:

**Կանանց իրավունքների պաշտպանությունը և ազատագրությունը որպես
Սրբուհի Տյուսաբի հրապարակախոսության հիմնադադափարներ**

Կնոջ *իրավունքների պաշտպանությունը* և *ազատագրության հիմնախնդիրները* Տյուսաբի հրապարակախոսության հիմնական գաղափարներն էին, որոնք նա հետագայում կերպավորեց «Մայտա»³², «Սիրանոյշ»³³, «Արաքսիա կամ վարժուհի»³⁴ երկերում, և իբրև առաջին վիպասանուհի, մեծ ազդեցություն ունեցավ ժամանակի հայ հասարակության, կնոջ մտածելակերպի և հասարակության մեջ կնոջ դերակատարության կարևորության վրա՝ իր առանձնահատուկ տեղը գրավելով նաև հայ գրականության պատմության տիրույթում³⁵:

Հրապարակախոսական հոդվածներում Սրբուհի Տյուսաբը բողոքում է կնոջ *անազատ* վիճակի դեմ՝ պահանջելով կրթության, դաստիարակության, տնտեսական անկախության՝ աշխատանքի իրավունք: Կ. Պոլսում Տյուսաբը ներգրավվել էր հայ հասարակական, մշակութային կյանքի մեջ՝ գիտելիքներն ու փորձը ներդնելով երիտասարդ կանանց և աղջիկների դաստիարակության գործին: Չնայած, որոշ գրականագետներ գտնում են, թե ֆեմինիստական գաղափարների պաշտպանը ազդվել է ֆրանսիական հեղափոխության և ֆրանսիայում տեղի ունեցող առաջադեմ շարժումներից, այնուամենայնիվ, նշենք, որ Տյուսաբը քննադատել է ֆրանսիական հեղափոխության հռչակած *ազատության* և *հավասարության* սկզբունքները, որոնք հեղինակի խոսքերով *պարզապես ահագին բառեր են*³⁶:

Տյուսաբը նաև հասարակական ակտիվ գոծունեություն էր վարում. առավելապես տեղեկացված լինելով *ընկերային (հանրային)* կյանքից: Այս համատեքստում, ուշագրավ են նաև հեղինակի բարեգործական գործունեությունը, դրա բնույթը, որպես կին գործիչ՝ վարժարանների և դպրոցների կայացման մեջ կատարած նրա ներդրումները և սոցիալական դերակատարությունը³⁷: Տյուսաբը մերժում էր նահապետական օրենքներով բռնի ամուսնությունը՝ էական տեղ հատկացնելով կնոջ ինքնիրացմանը և

³² Տե՛ս Ս. Տյուսաբ, Մայտա, Կ. Պոլիս, 1883, տպ. Զարդարեան, 249 էջ:

³³ Ս. Տյուսաբ, Սիրանոյշ, Կ. Պոլիս, 1884, տպ. Նշան Կ Պերպերեան, 408 էջ:

³⁴ Ս. Տյուսաբ, Արաքսիա կամ վարժուհի, Կ. Պոլիս, 1887, տպ. Նշան Կ Պերպերեան, 408 էջ:

³⁵ Տյուսաբին անվանել են հայոց Ժորժ Սանդ, հայ ֆեմինիզմի ավանգարդուհի, հայ գրականության նահապետուհի և այլն:

³⁶ Նույն տեղում, էջ 122:

³⁷ Ն. Համբարձումյան, Փարսադանյան Ս., Սրբուհի Տյուսաբը և հայ բարեգործական ընկերությունները, Գիտական Արցախ, 2022:

աշխատանքին: Նա կնոջը համարում էր *ողորմելի գոհ*, ում առջև փակ են *ամեն ազատ շավիղ*, և կարծում էր, թե կինը կարող է ազատություն նվաճել՝ լուսավորվելու, նախապաշարմունքների դեմ պայքարելու և աշխատելու միջոցով³⁸: Նա կոչում էր անում կանանց՝ փշրելու նախապաշարմունքները և անցնելու աշխատանքի, այդ կերպ՝ փրկելով սեփական ընտանիքները աղքատությունից ու կործանումից և արժանապատիվ կյանք վարելու քարոյական և մտավոր կարողությունները լիարժեքորեն գործի դնելով:

Հասարակության մեջ ունեցած սոցիալ-հասարակական դերակատարությունը, կրթամշակութային գործունեությունը և հայացքները ժամանակի արևմտահայ հասարակական գործիչների ուշադրության կենտրոնում էին: Կ. Պոլսում տպագրված գրական-գիտական, հասարակական-քաղաքական մի տարեգրքում ընդգծվում էր նրա գործունեության հասարակական-մանկավարժական շերտը՝ «Տիկին Տիսաբ մեծ ջանք տարած է նաև աղջկանց կրթութեան, անդամակցելով կրթական ընկերակցութեանց» և դատելով վեպերի մասին՝ շարունակում, որ դրանք «միշտ յիշատակելի պիտի մնան իբր այդ (կանանց) դատին նուիրուած պերճախօս ջատագովականներ»³⁹:

Տյուսաբի գաղափարները, չնայած, համարձակ էին, այնուամենայնիվ, մտավորականներից ոմանք՝ Ռեթեոս Պերպերյանը, Արփիար Արփիարյանը, Գրիգոր Ջոհրապը, Հակոբ Պարոնյանը, Գրիգոր Զիլինկիրյանը, Մատթեոս Մամուրյանը, Եղիա Տեմիրճիպաշյանը, դրական կամ բացասական դիրքորոշումներ էին հայտնում հեղինակի երկերի առիթով, ինչը, սակայն, չէր ազդում հեղինակին:

Գրող-հրապարակախոս և խմբագիր Արփիար Արփիարյանը «Գրական դեմքեր» հոդվածում, որ լույս է տեսել 1903 թվականին «Բազմավեպ»-ում, գրում է, թե Տյուսաբը հայտնի է իր հանրային կյանքով ու հրատարակություններով, իսկ նրա վեպերը «ամենքն ալ ազնվագգի զգացումներէ ներշնչուած են, բայց ամենքն ալ կարդացողին հոգին բերանը կը բերեն, այնքան ձանձրացուցիչ են, քարոզ վեպեր»⁴⁰: Արփիարյանը Տյուսաբին համարել է «եվրոպականացյալ հայունի»՝ հարցնելով, թե *ու՞ր է հայ կինը, ի՞նչ է իր դատը*⁴¹: Արփիարյանը վիպասանուիուն անվանել է՝ *աշխատասեր հայ տիկին, որ ազնիվ զգացումներով տոգորուած էր*, և

³⁸ Ս. Տյուսաբ, Մայտա, 1883, Կ. Պոլիս, էջ 16:

³⁹ Ա. Անտոնյան, Գանձարան. բարձրագույն դասընթաց, Կ. Պոլիս, 1920, էջ 232:

⁴⁰ Ա.Արփիարյան, Երկեր, Ե., 1987, էջ 502: Տե՛ս նաև՝ «Բազմավեպ», Վենետիկ, 1903, էջ 378-385:

⁴¹ Ա.Արփիարյան, Երկեր, Ե., 1987, էջ 502:

գտնում էր, թե՛ «նրա գրքերուն կըպակսեր թե՛ ընկերական կեանքի գիտութիւն, թե՛ վիպասանութեան արուեստը»⁴²:

19-րդ դարի վերջին գրող-հրապարակախոս, գեղագետ և քննադատ Եղիա Տեմիրճիպաշյանը, լինելով Տյուսաբի սերնդակիցը, անձամբ ճանաչել է նրան⁴³: Նա գրում է, թե *առաջին հայ աղջիկը եղավ Սրբուհի Վահան, որ սկսավ գրիչ շարժել ու քնարերգել*⁴⁴: Տյուսաբին մտավորական կին դիտարկելով՝ Տեմիրճիպաշյանը գտնում է, *թե հայ իգական սեռը ավելի հարուստ գլուխ մը չունի. գեղարվեստը, իմաստասիրութիւնն ու լեզուներն եղան իր ուսման ուսումնասիրութեան առարկա*: Նա զարմանում է, թե ինչպէս է, որ կինը, ով ունի ընտանիք, գրում է վեպեր և տպագրվում է, ժամանակ է գտնում նաև հասարակական գործունեության համար: Ուստի՝ հարցնում է՝ «Գրականութեանց ու Գեղարուեստից այդքան տէնդայիլը հարումն ինչպէս ժամանակ կթողուր, մարդ կզարմանա, ընդունելութիւն ընելո միշտ եւ միշտ հայ իգական սեռի կրթութիւնը նպատակ ունեցող բոլոր միութեանց ամենագործուն մասնակցութիւն ունենալու»⁴⁵: Տյուսաբի գրական գործունեությունը գնահատելով՝ Տեմիրճիպաշյանը հիշատակում է նաև հեղինակի «Մայտա» վեպը, որը, ըստ նրա, *լափվեցավ իր բարձր գնույն հակառակ, իսկույն սպառեցավ, օրինակին ոսկի մը տվող կա այսօր, եթե գտնու*»⁴⁶:

Չնայած նուրբ բարկամական փոխհարաբերություններին՝ Տեմիրճիպաշյանը քննադատել է Տյուսաբի երրորդ՝ «Արաքսիա կամ վարժուհին» վեպը՝ համարելով այն *աններդաշնակ և անուղիղ լեզվով* գրված և *դժվար կարդացվող գործ*: Այս քննադատականից պարզվում է, որ վիպասանուհին ոչ իրապաշտական գույներով է պատկերել հայ իրականությունը, բայց «կյանքն եւ հայ ընկերութիւնն հեռի են այն գեղեցիկ

⁴² Նույն տեղում:

⁴³ Տեմիրճիպաշյանի կյանքի որոշակի ժամանակահատվածում, երբ նա գտնվում էր հիվանդանոցում, նրան այցելում են երեք նշանավոր կանայք, որոնցից մեկը Սրբուհի Տյուսաբն էր: Այս այցելությունների մասին Տեմիրճիպաշյանը գրում է՝ «Հիվանդ էի, եկիք, տեսիք զիս» գործում, որը ուղղված էր սիրելի *սփոփածու հրեշտակին*՝ Էլեն Նիսընին: Այցելուներին Եղիան համարում է Գեղեցիկի և Բարու բարեկամուհիներ, և ցավով գրում է Էլենին, թե՛ «հայ ազգին այդպիսի երեք անհատություններ իրարու ետեւէ սուղ ժամանակի մէջ կորսնցուցի, որոնք եղբայրակցուհիներս, որոնք բարեկամուհիներս էին»:

⁴⁴ Տեմիրճիպաշյանի այս կարծիքը ճիշտ չէ, քանի որ Սրբուհի Տյուսաբից առաջ բանաստեղծություններ գրել է Էլպիս Կեսարացյանը 1861-63 թվականներին:

⁴⁵ Նույն տեղում, էջ 348:

⁴⁶ Նույն տեղում, էջ 370:

պատկերին նմանել, զոր ճարտար վրձինով մը գծած է Տիկին Տյուսաբ»⁴⁷: Որոշակի քննադատական մոտեցումով չհավանելով Տյուսաբի երրորդ վեպը, որն *իբրև բարոյական գործ հիանալի է*, Եղիան, այնուամենայնիվ, իրեն այդ *չքնադ անձի երկրպագուներեն է* համարել: Չնայած քննադատություններին և մերժումներին, Տյուսաբի վեպերը հասարակական մեծ արձագանք էին գտնում: Ըստ Տեմիճիպաշյանի, դրանք «հայ իգական սեռին վրա դարձուցին բովանդակ հայ ընկերութեան ուշադրութիւնն, ե՛րբ, ինչպէ՛ս այդքան կրցած էր բարձրանալ հայ կինն»⁴⁸:

Տղամարդ գրողը կարող է միջակ լինել, կին գրողը՝ երբեք

Սրբուհի Տյուսաբի երկերի, հրապարակախոսական հոդվածների և հանրային ելույթների արձագանքները տեղ էին գտնում ոչ միայն Կ. Պոլսում, այլև հասնում էին մինչև Թիֆլիս և տարբեր գաղութներ: Սակայն տասնվեցամյա դստեր՝ Դորիի, մահից հետո, նա բոլորովին մեկուսացել էր աշխարհիկ կյանքից և ընկերներից՝ «Ընդարձակ հյուրասենյակին խորքին մեջ, տիկին Սրբուհի Տյուսաբ, սևագգեստ, նստած էր թիկնաթոռի մը վրա: Ան տասնյակ տարիներ ի վեր անմխիթար մնացեր էր իր տասնըվեցամյա աղջկան՝ Տոռայի մահվան համար»⁴⁹:

Տյուսաբի ստեղծագործությունը զգալիորեն ներագդել էր քանաստեղծուհի Սիպիլի⁵⁰ վրա, որը միշտ «հոգիին հետ կգբաղի, երբեք՝ մարմինին», որովհետև լավ էր գիտակցում Տյուսաբի խոսքերը, թե տղամարդ գրողը կարող է միջակ լինել, իսկ կին գրողը՝ երբեք: Սիպիլը, որ «իր անհատական կեանքովը պարծանքն է իր սեռին եւ մեծ տաղանդովը՝ մեր բոլոր գրականութեան»⁵¹:

Արևմտահայ կին քանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս Սիպիլը այդ տարիներին նույնպես այցելել է Տյուսաբին և իր «Կիսադեմերը քողին ետևեն» էսսեների շարքում լավագույնս է գնահատել Տյուսաբի դերն ու նշանակությունը հայ գրական-հասարակական կյանքում՝ «Գրողներուն երիցագույնը, խոսողներուն գերագույնը և զգացողներուն ծայրահեղությունն է իր սեռին համար... Ինքը հանդուգն «ֆեմինիստ» մը երկերուն մեջ, անկեղծ

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Նույն տեղում, էջ 348:

⁴⁹ Զ.Եսայան, Սիլիխտարի պարտեզներ, Ե., 2018, էջ 150:

⁵⁰ Հրանտ Ասատուրի բնութագրությամբ, *նրբամիտ ու պատրաստաբան այդ կինը ունէր հզոր միտք եւ իւրայատուկ տեսակէտներ* կանանց դաստիարակության հարցի կապակցությամբ:

⁵¹ Գ.Զոհրապ, Երկերի ժողովածու չորս հատորով, Ե., 2001, հ. Ա. էջ 466-468:

արհամարհող մը կեղծավոր պատշաճությանց, քաջություն ունեցած է ըսելու ճշմարտություններ, որոնց առջենն զարհուրած ետ-ետ պիտի փախչեր մեր պչրասեր կիներուն ծփծփուն առաքինությունը...»⁵²:

Աղջկա մահից հետո, հասարակությունից մեկուսացման տարիներին, Տյուսաբին այցելել են նաև նրա երկերով ոգևորված Ջապել Եսայանն ու Արշակունիի Ճեզվեճյանը (հետագայում՝ Թեոդիկ): Եվ այդ հանդիպումը սևագգեստ տիկնոջ հետ բավական ուսանելի է եղել երիտասարդ աղջիկների համար: Այդ հանդիպումը Ջապել Եսայանը ամենայն մանրամասնությամբ նկարագրում է «Միլիտարի պարտեզներ» վեպի «Տիկին Տյուսաբ և Թովմաս Թերգյան» հատվածում՝ «Տիկին Տյուսաբ լսելով, որ գրական ասպարեզին թեկնածու մըն էմ, ինձ նախագգուշացուց, ըսելով, որ այդ ասպարեզը կնոջ համար ավելի շատ տատասկներ ուներ, քան դափնիներ: Ինձ ըսավ, թե մեր իրականության մեջ դեռ անհանդուրժելի կը համարեն, որ կին մը հրապարակ գա և ուզե իր տեղը գրավել: Հաղթահարելու համար այդ բոլորը, պետք էր միջակութենեն վեր ըլլալ: Երիկ մարդ գրագետը ազատ է միջակ ըլլալ, բայց ո՛չ կին գրագետը»⁵³:

Եզրակացություն

Սրբուհի Տյուսաբը գրել է վեպեր, հրապարակախոսական հոդվածներ, բանաստեղծություններ, նամակներ: Կին-տղամարդ փոխհարաբերություններում ազատության և հավասարության իրավունքների և գաղափարների պաշտպանն էր Տյուսաբը: Կնոջ ազատագրության և տարբեր բնագավառներում իրավունքները օրինականացնելու համար ոչ ոք այդքան վճռականորեն չի պայքարել, որքան՝ Տյուսաբը: Եթե փորձենք ընդհանրացնել արևմտահայ կին մտավորականի սոցիալ-հասարակական և գրական հայացքները, ապա դրանք հնարավոր է ընդհանրացնել հետևյալ տիպոյթներում՝

ա. կին-տղամարդ իրավահավասարության,

բ. կանանց աշխատանքի ազատության,

գ. կանանց կրթության և դաստիարակության,

իզական սեռը՝ ազգը բարձրացնելու համար,

դ. կանանց զգացմունքների վրա բռնություն չգործադրելու,

ե. ամուսնական կյանքում հավասարության. ըստ Տյուսաբի, տղամարդիկ ազատ են, իսկ կանայք չունեն իրավունքներ,

⁵² Միպիլ, Երկեր, Ե., «Հայաստան» հրատ., 1965, էջ 170:

⁵³ Եսայան Զ., Միլիտարի պարտեզներ, Ե., 2018, էջ 150:

զ. ազգային սովորություններն ու բարքերը անհրաժեշտ է պահպանել առանց տաբուների և դոգմաների:

Նկատի պետք է ունենալ, որ 19-րդ դարի երկրորդ կեսին մեծ քաջություն, պատվախնդրություն, ինքնավստահություն, առաջադեմ մտածողություն և խորը պատրաստվածություն էր պահանջվում կին հեղինակ(ներ)ից՝ այսօրինակ մտքեր արտահայտելու համար: Իբրև հանրային գործունեությանը, բարեգործությանը նվիրված կին հեղինակ, բանախոս, հոդվածագիր և վիպագիր, Տյուսաբը կայուն էր իր տեսակետներում և ձգտում էր իրագործված տեսնել հայ կնոջ ազատությունը, աշխատանքի իրավունքով պայմանավորված տնտեսական անկախությունը, հարգանքը և արժանապատվությունը կին-տղամարդ փոխհարաբերություններում:

Տյուսաբը քննադատում էր կնոջ բարձրագույն կրթության, դաստիարակության հիմնազաղափարները հարցականի տակ դնողներին, *բարձրագոյն ուսում ստացող կինը չի կրնար լաւ ամուսին եւ լաւ մայր դառնալ* քարոզողներին, և հակադարձում էր, թե՛ *կինը բարոյապէս և մտավորապէս տկար արարած չէ*: Նրա հետաքրքրությունների և մտահոգությունների առանցքը հայ կնոջ ճակատագիրն էր, քանի որ հասարակության ամենաձնշված և արհամարհված անդամը, ըստ նրա, կինն էր:

Տյուսաբ-*հրապարակախոսը* կրթեց և դաստիարակեց Տյուսաբ-*վիպասանուհուն*: Հեղինակի բոլոր վեպերը, հատկապես «Մայտան», արտահայտում են նրա հոդվածներում առաջադրված կանանց ազատագրության հիմնազաղափարը:

Օգտագործված գրականություն

1. Անտոնյան Ա., Գանձարան. Բարձրագույն դասընթաց, Կ. Պոլիս, 1920, 232 էջ:
2. «Արեւելեան մամուլ», Իզմիր, ԺԱ տարի, 1881, սեպտեմբեր:
3. «Արեւելեան մամուլ», Իզմիր, ԺԱ տարի, 1881, դեկտեմբեր:
4. «Արեւելեան մամուլ», Իզմիր, ԺԲ տարի, 1882, ապրիլ:
5. Արփիարյան Ա. Երկեր, Ե., «Սովետական գրող», 1987, 523 էջ:
6. «Բազմավեպ», Վենետիկ, 1903:
7. «Գրական և իմաստասիրական շարժում», Կ. Պոլիս, 1885, տետր 7, 121 էջ:
8. Եսայան Զ., Սիլիհտարի պարտեզներ, Ե., 2018, 200 էջ:
9. Զոհրապ Գ., Երկերի ժողովածու չորս հատորով, Ե., 2001, հ. Ա., 468 էջ:
10. «Թերձեմանը էֆքեար», Կ. Պոլիս, 1882, 24 մարտի, 1383:

11. «Լույս», 1882, մայիսի 22, թիվ 247:
12. Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 379 էջ:
13. Համբարձումյան Ն., Փարսադանյան Ս., Սրբուհի Տյուսաբը և հայ բարեգործական ընկերությունները, «Գիտական Արցախ», 2022:
14. Հրանտ Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, 158 էջ:
15. «Մասիս», Կ. Պոլիս, 1880, թիվ 2528:
16. «Մասիս», Կ. Պոլիս, 1880, թիվ 2587:
17. «Մասիս», Կ. Պոլիս, 1880, դեկտեմբեր:
18. «Մեղու Հայաստանի», 1882, թիվ 19:
19. «Մեղու Հայաստանի», 1882, թիվ 29:
20. «Մեղու Հայաստանի», 1882, թիվ 45:
21. «Մշակ», 1882, թիվ 54:
22. «Մշակ», 1882, թիվ 55:
23. Չիլինկիրյան Գր., Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս, «Արևելեան մամուլ», Զմյուռնիա, 1883:
24. Պողոսեան, Հ. Ե. Վ., Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, հ. Ա, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1957, 769 էջ:
25. Սիպիլ, Երկեր, Ե, «Հայաստան» հրատ., 1965, 450 էջ:
26. Տյուսաբ Ս., «Կանանց դաստիարակությունը», «Մասիս», Կ. Պոլիս, 1880 (Դեկտեմբեր):
27. Տյուսաբ Ս., «Կանանց աշխատության սկզբունքը», «Արևելեան մամուլ» (ա), 1881, ԺԱ տարի (Դեկտեմբեր):
28. Տյուսաբ Ս., «Քանի մը խոսք կանանց անգործության մասին», «Արևելեան մամուլ» (բ), Իզմիր, 1881, ԺԱ տարի (Մեպտեմբեր):
29. Տյուսաբ Ս., «Հայ ընկերությունք», «Արևելեան մամուլ», Իզմիր, 1882, ԺԲ տարի, (Յունիս), էջ 241-251:
30. Տյուսաբ Ս., Մայտա, Կ. Պոլիս, 1883, տպ. Զարդարեան, 249 էջ:
31. Տյուսաբ Ս., Սիրանոյշ, Կ. Պոլիս, 1884, տպ. Նշան Կ Պերպերեան, 408 էջ:
32. Տյուսաբ Ս., Արաքսիա կամ վարժուհի, Կ. Պոլիս, 1887, տպ. Նշան Կ. Պերպերեան, 408 էջ:
33. Տյուսաբ Ս., Աշխարհաբառ հայ լեզուն, Կ. Պոլիս, 1880, տպ. Յովսեփայ Գավաֆեան, 15 էջ:
34. Տեմիրճիպաշյան Ե., Երկեր, Ե., «Սովետական գրող», 1986, 534 էջ:

Наира Амбарцумян, Сурануш Парсаданян

**Публицистика Србуи Тюсаб, ее социально-общественные взгляды и роль
в процессе женской эмансипации**

Заключение

Ключевые слова и выражения: Србуи Тюсаб, публицистика, современный армянский язык, османская тирания, Константинополь, Смирна.

В исследовании рассмотрены художественная и публицистическая деятельность, статьи и социально-общественные взгляды западноармянской писательницы Србуи Тюсаб, жившей и работавшей в Константинополе во второй половине XIX века. Публицистика Тюсаб представляет собой новый опыт трансляции политических, общественно-социальных и литературно-культурных диалогов, получивших наибольшую популярность во второй половине XIX века.

Цель исследования – на основе изучения публицистических статей Србуи Тюсаб выявить литературно-культурные и социально-общественные взгляды автора, а также ее роль в процессе женской эмансипации. *Задача* исследования – проанализировать публицистическое наследие западноармянской писательницы второй половины XIX века Србуи Тюсаб, которое до сих пор должным образом не изучено. *Новизна* исследования заключается в попытке по-новому осмыслить пути женской эмансипации и ее дальнейшее развития. Исследование является междисциплинарным. Оно выполнено с учетом взаимосвязей и взаимоотношений между литературоведением, историей, антропологией и этнокультурологией. Нами были применены литературоведческие, исторические и антропологические методы анализа, акцентирующие внимание на различных проявлениях и пластах, которые встречаются в публицистике Србуи Тюсаб в рамках изучаемого материала. Такое исследование проводится впервые. Оно представляется важным и актуальным не только с позиции междисциплинарного подхода, но и с точки зрения анализа «женского вопроса» в арменоведении.

Naira Hambardzumyan, Siranush Parsadanyan

**Srbuhi Tyusab's publicism, social-public views and
role in women's emancipation processes**

Conclusion

Key words and expressions: Srbuhi Tyusab, publicism, the Armenian language, Ottoman dictatorship, Constantinople, Smyrna.

The study examined fiction and journalistic activities, articles, and socio-public views of the Western Armenian Constantinople writer of the second half of the 19th century, Srbuhi Tyusab. Tyusab's publicism was a new experience of broadcasting political, socio-public and literary-cultural dialogues, which was most popular in the second half of the 19th century.

The *aim* of the study is to reveal the author's literary-cultural and socio-public views, as well as their role in the processes of women's emancipation, by examining Srbuhi Tyusab's op-ed articles. The *problem* of the study is to analyze the publicistic legacy of the Western Armenian female author of the second half of the 19th century, Srbuhi Tyusab, which has not been properly examined yet. The *novelty* of the study is the attempt to interpret the ways of women's emancipation and development in a new fashion. The study is interdisciplinary. It was analyzed in the context of the reciprocal connections and relationships between literary studies, history, anthropology, and ethno-culture. Literary critical, philosophical, and linguistic methods were applied, highlighting and focusing the various manifestations and stratifications existing in Srbuhi Tyusab's op-ed articles within the scope of the studied material. This kind of study has been done for the first time. It is important and relevant not only from the point of view of interdisciplinarity, but also from the point of view of analyzing women's issues in Armenology.

Խմբագրություն է ուղարկվել 27.12.2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 14.01.2023թ

Հրապարակման է հանձնարարվել 28.04.2023թ.